ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
Տնտեսական, սանիտարական և լվացքի միջոցների ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԱՄԱՇՏ-ՄԱ-ՏՆՏ-18/1/1

ք. Աշտարակ «02» փետրվարի 2018 թ.

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար՝ Թ.Շահվերդյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Գնորդ>>, մի կողմից, և Ա/Ձ Գևորգ Եդիգարյան -ն, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 338420 երեք հարյուր երեսունութ հազար չորս հարյուր քսան ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը

կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պարանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 2 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք

բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքապետարան	Գևորգ Եդիգարյան Ա/Ձ
ՀՀ Արագածոտնի մարզ	Ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու հր. 17/1
Ք.Աշտարակ,Ն.Աշտարակեցու հրապարակ 7	ՀՎՀՀ 54628301
ՀՎՀՀ՝ 05005705	Ինեկոբանկ ՓԲԸ Աշտարակի մ/ճ
ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	ՀՀ 2050032088111001
Հ/Հ 900442101037	
Համայնքի ղեկավար՝	
----------Թ.Շահվերդյան	**---------- Գ. Եդիգարյան**

Հավելված N 1
«03» դեկտեմբերի 2018 թ. կնքված
ՀՀԱՄԱՇՏ-ՄԱ-ՏԼՏ-18/1/1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
									մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը**
1	39831245	օճառ, հեղուկ	Ա/Ձ Հ. Մաթևոսյան, "Բլեսկ" ՀՀ	ձեռքի հեղուկ 5լիտրանոց օճառից անջատված ճարպաթթուների պնդեցման ջերմաստիճանը (տիտրը)՝ (36-41) 0 C, նատրիումի քլորիդի զանգվածային մասը՝ 0,4 %-ից ոչ ավելի, անվտանգությունը՝ ըստ ՀՀ առողջապահության նախարարի 2005թ. նոյեմբերի 24-ի N 1109-Ն հրամանով հաստատված «N 2-III-8.2 օծանելիքակոսմետիկական արտադրանքի արտադրությանը և անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» սանիտարական կանոնների և նորմերի, մակնշումը և փաթեթավորումը::	լիտր	260	19500	75	**ՀՀ Արագածոտնի մարզ Ք.Աշտարակ,Ն.Աշտարակեցու հրապարակ 7**	75	նախատեսվում է գնել մինչև 15 դեկտեմբեր 2018թ.,
2	39831242	լվացքի փոշի ձեռքով լվանալու համար	"Ֆիկոստա" ՍՊԸ. Բուլղարիա	Սպիտակ, բաց դեղնավուն կամ գունավորած հատիկավոր փոշի: Փոշու զանգվածային մասը ոչ ավել 5 %, pH-ը՝ 7,5-11,5, ֆոսֆորաթթվական աղերի զանգվածային մասը ոչ ավելի 22 %, փրփրագոյացման ունակությունը (ցածր փրփրագոյացնող միջոցների համար) ոչ ավել 200 մմ, փրփուրի կայունությունը ոչ ավելի 0,3 միավոր, լվացող ունակությունը ոչ պակաս 85 %, սպիտակեցնող ունակությունը (քիմիական սպիտակեցնող նյութեր պարունակող միջոցների համար) ոչ	հատ	320	16000	50	**ՀՀ Արագածոտնի մարզ Ք.Աշտարակ,Ն.Աշտարակեցու հրապարակ 7**	50	նախատեսվում է գնել մինչև 15 դեկտեմբեր 2018թ.,

				պակաս 80 %: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2004թ. դեկտեմբերի 16-ի N 1795-Ն որոշմամբ հաստատված «Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող և մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգի» համաձայն:450գ-ոց տուփերով							
3	39836000	ավել, սովորական	ՀՀ	Մենյակի հատակը մաքրելու համար, բնական, տեղական արտադրության, քաշը չոր վիճակում (350-500)գրամ, երկարությունը (85-90)սմ, ավլող մասի լայնքը (35-40)սմ:	հատ	700	28000	40	ՀՀ Արագածոտնի մարզ Ք.Աշտարակ,Ն.Աշտարակեցու հրապարակ 7	40	նախատեսվում է գնել մինչև 15 դեկտեմբեր 2018թ.,
4	39831240	մաքրող նյութեր /ռախշա/	Ա/Ձ Հ. Մաթևոսյան, "Բլեսկ" ՀՀ	նախատեսվածկերամիկական մակերեսներ մաքրելու համա ,պահպանման ժամկետը 36 ամիս,քաշը 500 գ.Ախտահանող հատկությամբ մաքրող միջոց	հատ	200	10000	50	ՀՀ Արագածոտնի մարզ Ք.Աշտարակ,Ն.Աշտարակեցու հրապարակ 7	50	նախատեսվում է գնել մինչև 15 դեկտեմբեր 2018թ.,
5	39831280	ապակի մաքրելու միջոց	Ա/Ձ Հ. Մաթևոսյան, "Բլեսկ" ՀՀ	BLESK կամ համարժեք 500 մլԱպակիներ, պատուհաններ մաքրելու միջոց, որն արդյունավետ վերացնում է հետքերն	հատ	280	5600	20	ՀՀ Արագածոտնի մարզ Ք.Աշտարակ,Ն.Աշտարակեցու հրապարակ 7	20	նախատեսվում է գնել մինչև 15 դեկտեմբեր 2018թ.,
6	39835000	հատակ մաքրելու ձող, փայտյա	ՀՀ	1,5-2 մ երկարության, փայտե :	հատ	540	2700	5	ՀՀ Արագածոտնի մարզ Ք.Աշտարակ,Ն.Աշտարակեցու հրապարակ 7	5	նախատեսվում է գնել մինչև 15 դեկտեմբեր 2018թ.,
7	39839100	գոգաթիակ, աղբը հավաքելու համար, ձողով	ՀՀ	գոգաթիակ, աղբը հավաքելու համար, ձողով հաստությունը՝ 0,8 մմ, 1 մ երկարությամբ ձողով:խորություն՝ 21սմ լայնություն՝ 28սմ	հատ	1400	2800	2	ՀՀ Արագածոտնի մարզ Ք.Աշտարակ,Ն.Աշտարակեցու հրապարակ 7	2	նախատեսվում է գնել մինչև 15 դեկտեմբեր 2018թ.,
8	39812410	կահույքի փայլեցման միջոց	"Կոզմոքի միա"	Փայլեցնող միջոց փայտյա կահույքի համար. աերոզոլային փաթեթվածքով կամ հեղուկի տարաներով:POLO կամ համարժեք	հատ	580	8700	15	ՀՀ Արագածոտնի մարզ Ք.Աշտարակ,Ն.Աշտարակեցու հրապարակ 7	15	նախատեսվում է գնել մինչև 15 դեկտեմբեր 2018թ.,
9	39831100	լվացող նյութեր /ժավել/	<Սապ> ՀՀ	Սպիտակեցնող հեղուկ ,ժավել 1լ-ոց տարայով,<Սապ> տեսակի կամ համարժեք	լիտր	80	6400	80	ՀՀ Արագածոտնի մարզ Ք.Աշտարակ,Ն.Աշտար	80	նախատեսվում է գնել մինչև 15 դեկտեմբեր

									ակեցու հրապարակ 7		2018թ.,
10	39831283	հատակի լվացման լաթ		լաթեր տրիկոտաժային բամբակյա հումքից	հատ	440	15400	35	ՀՀ Արագածոտնի մարզ Ք.Աշտարակ,Ն.Աշտարակեցու հրապարակ 7	35	նախատեսվում է գնել մինչև 15 դեկտեմբեր 2018թ.,
11	39522330	մաքրող կտորներ		Մաքրող կտորներ 30սմ*30սմ չափերի,<Մուլտիպուտպոս>	հատ	170	8500	50	ՀՀ Արագածոտնի մարզ Ք.Աշտարակ,Ն.Աշտարակեցու հրապարակ 7	50	նախատեսվում է գնել մինչև 15 դեկտեմբեր 2018թ.,
12	39224331	դույլ պլաստմասե	Տեղական արտադրության, ՀՀ	Պլաստմասե, 8 լ տարողության, անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 25-ի N 679-Ն որոշմամբ հաստատված ,Սննդամթերքի հետ շփվող պոլիմերային և դրանց հիմքով պլաստմասե արտադրանքների տեխնիկական կանոնակարգի:	հատ	440	1320	3	ՀՀ Արագածոտնի մարզ Ք.Աշտարակ,Ն.Աշտարակեցու հրապարակ 7	3	նախատեսվում է գնել մինչև 15 դեկտեմբեր 2018թ.,
13	19641000	պոլիէթիլենային պարկ, աղբի համար	"Բուբ" ՌԴ	Աղբի տոպրակներ (20լ, 30 հատ) Գույնը՝ սև, կապույտ Չափսերը՝ 45x50 սմ, 20 լ Քանակ: 30 հատ Օգտագործումը: Նախատեսված են աղբի համար	փաթեթ	370	24050	65	ՀՀ Արագածոտնի մարզ Ք.Աշտարակ,Ն.Աշտարակեցու հրապարակ 7	65	նախատեսվում է գնել մինչև 15 դեկտեմբեր 2018թ.,
14	33761000	զուգարանի թուղթ, ռուլոնով	"Մոլլիս " ՍՊԸ ՀՀ	Երկշերտ կամ եռաշերտ, 9,8սմX12,5սմ, 150 թերթիկ, երկ. 18,75մ, պատրաստված գրելու թղթից, լրագրաթղթից և այլ թղթերի թափոններից, թույլատրված սանիտարահիգիենիկ նշանակության ապրանքներ պատրաստելու համար: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006 թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշմամբ հաստատված "Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի":	հատ	90	27000	300	ՀՀ Արագածոտնի մարզ Ք.Աշտարակ,Ն.Աշտարակեցու հրապարակ 7	300	նախատեսվում է գնել մինչև 15 դեկտեմբեր 2018թ.,
15	18421160	երկար ձեռնոցներ	Բորսան Չինաստան	Ռեզինից տնտեսական հասարակ ձեռնոցներ, որոնք պաշտպանում են ձեռքերը տարատեսակ քիմիական նյութերից, ռետինե երկար թևքերով,տարբեր չափերի	զույգ	200	10000	50	ՀՀ Արագածոտնի մարզ Ք.Աշտարակ,Ն.Աշտարակեցու հրապարակ 7	50	նախատեսվում է գնել մինչև 15 դեկտեմբեր 2018թ.,

16	44511110	բահեր	ՀՀ	բարձրորակ պողպատից, սրածայր, ռուսական արտադրության կամ համարժեք պոչի հետ միասին, փայտյա պոչով, պոչի երկարությունը ոչ պակաս 1,7մ-ից	հատ	800	4000	5	**ՀՀ Արագածոտնի մարզ Ք.Աշտարակ,Ն.Աշտարակեցու հրապարակ 7**	5	նախատեսվում է գնել մինչև 15 դեկտեմբեր 2018թ.,
17	44511120	գոգաթիակներ	ՀՀ	գոգաթիակ, աղբը հավաքելու համար, ձողով հաստությունը՝ 0,8 մմ, 1 մ երկարությամբ ձողով:խորություն՝ 21սմ լայնություն՝ 28սմ	հատ	950	4750	5	**ՀՀ Արագածոտնի մարզ Ք.Աշտարակ,Ն.Աշտարակեցու հրապարակ 7**	5	նախատեսվում է գնել մինչև 15 դեկտեմբեր 2018թ.,
18	44411110	ջրի ծորակ, փական	Մորենա	Տարբեր չափերի, խառնիչային տիպի:	հատ	3800	22800	6	**ՀՀ Արագածոտնի մարզ Ք.Աշտարակ,Ն.Աշտարակեցու հրապարակ 7**	6	նախատեսվում է գնել մինչև 15 դեկտեմբեր 2018թ.,
19	44411750	սանհանգույցի բաքեր	Նովա	նախատեսված պատի վրա ամրացող սանհանգույցների բաքեր	հատ	6600	13200	2	**ՀՀ Արագածոտնի մարզ Ք.Աշտարակ,Ն.Աշտարակեցու հրապարակ 7**	2	նախատեսվում է գնել մինչև 15 դեկտեմբեր 2018թ.,
20	31684100	վարդակ երկբևեռանի	Մակել	Վարդակ 1 կամ 2 տեղանոց պլաստմասե UL-94V, 1 port RJ11 բնիկով, 1 տեղանոց, մեկուսիչի էլեկտրական դիմադրությունը՝ R 1000 MOм, աշխատանքային ջերմաստիճանը՝ մինուս 30 °C-ից մինչև +80 °C, սպիտակ կամ կաթնագույն: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005 թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված «Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի»:	հատ	400	6000	15	**ՀՀ Արագածոտնի մարզ Ք.Աշտարակ,Ն.Աշտարակեցու հրապարակ 7**	15	նախատեսվում է գնել մինչև 15 դեկտեմբեր 2018թ.,
21	31651100	մեկուսիչ ժապավեն, օղակաձև	Վինիտապ	մեկուսիչ ժապավեն, օղակաձևՀոսանքի մեկուսացման համար տարբեր երկարության և լայնության գլանափաթեթներով պոլիմերային ժապավեն, կապույտ կամ սև գույնի:	հատ	160	4800	30	**ՀՀ Արագածոտնի մարզ Ք.Աշտարակ,Ն.Աշտարակեցու հրապարակ 7**	30	նախատեսվում է գնել մինչև 15 դեկտեմբեր 2018թ.,
22	31685000	էլեկտրական երկարացման լար	Բորսա	Չափսը՝ 3տ 5 մ կամ 3տ 10 մ: 110 Ա, 250 Վ միացման մանրակներով: Անվտանգությունն՝ ըստ ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված "Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների	հատ	1700	51000	30	**ՀՀ Արագածոտնի մարզ Ք.Աշտարակ,Ն.Աշտարակեցու հրապարակ 7**	30	նախատեսվում է գնել մինչև 15 դեկտեմբեր 2018թ.,

				տեխնիկական կանոնակարգի":							
23	31531210	էլեկտրական լամպ, 60W, 80W, 100W	Լիսմա ՌԴ	Էլեկտրական լամպ (220-230) Վ լարման, 50 Հց հաճախականության, 100 Վտ հզորությամբ, թափանցիկ, տանձաձև կամ սնկաձև, կոթառը E 27/27 տիպի: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված: Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի:	հատ	90	10800	120	**ՀՀ Արագածոտնի մարզ Քաշտարակ,Ն.Աշտարակեցու հրապարակ 7**	120	նախատեսվում է գնել մինչև 15 դեկտեմբեր 2018թ.,
24	18141100	Աշխատանքային ձեռնոցներ	ՉԺՀ	ձեռքի ափի մասում սիլիկոնապատ տարբեր չափերի	զույգ	180	9000	50	**ՀՀ Արագածոտնի մարզ Քաշտարակ,Ն.Աշտարակեցու հրապարակ 7**	50	նախատեսվում է գնել մինչև 15 դեկտեմբեր 2018թ.,
25	31531600	ցերեկային լամպ 120սմ	Բորսա	Լյումինեսցենտային ցերեկային լամպ 120 սմ: Տարածքների լուսավորման համար:	հատ	1200	24000	20	**ՀՀ Արագածոտնի մարզ Քաշտարակ,Ն.Աշտարակեցու հրապարակ 7**	20	նախատեսվում է գնել մինչև 15 դեկտեմբեր 2018թ.,
26	39224341	աղբարկղ,պլաստմասե	ՀՀ	աղբարկղ, պլաստմասե Զամբյուղատիպ, պլաստմասե, 10 դմ3 տարողությամբ:	հատ	700	2100	3	**ՀՀ Արագածոտնի մարզ Քաշտարակ,Ն.Աշտարակեցու հրապարակ 7**	3	նախատեսվում է գնել մինչև 15 դեկտեմբեր 2018թ.,

ԳՆՈՐԴ

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքապետարան
ՀՀ Արագածոտնի մարզ
Քաշտարակ,Ն.Աշտարակեցու հրապարակ 7
ՀՎՀՀ՝ 05005705
ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900442101037
Համայնքի ղեկավար՝

----------Թ.Շահվերդյան

ՎԱՃԱՌՈՂ

Գևորգ Եդիգարյան Ա/Ձ
Քաշտարակ, Ն. Աշտարակեցու հր. 17/1
ՀՎՀՀ 54628301
Ինեկոբանկ ՓԲԸ Աշտարակի մ/ճ
ՀՀ 2050032088111001

---------- Գ. Եդիգարյան

Հավելված N 2
«02» փետրվարի 2018 թ. կնքված
ՀՀԱՄԱՇՏ-ՄԱ-ՏՆՏ-18/1/1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	39831245	օճառ, հեղուկ	19500	19500	19500	19500	19500	19500	19500	19500	19500	19500	19500	19500	19500
2	39831242	լվացքի փոշի ձեռքով լվանալու համար	16000	16000	16000	16000	16000	16000	16000	16000	16000	16000	16000	16000	16000
3	39836000	ավել, սովորական	28000	28000	28000	28000	28000	28000	28000	28000	28000	28000	28000	28000	28000
4	39831240	մաքրող նյութեր /ռախշա/	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000
5	39831280	ապակի մաքրելու միջոց	5600	5600	5600	5600	5600	5600	5600	5600	5600	5600	5600	5600	5600
6	39835000	հատակ մաքրելու ծող, փայտյա	2700	2700	2700	2700	2700	2700	2700	2700	2700	2700	2700	2700	2700

7	39839100	զոգաթիակ, աղբը հավաքելու համար, ծողով	2800	2800	2800	2800	2800	2800	2800	2800	2800	2800	2800	2800	2800
8	39812410	կահույքի փայլեցման միջոց	8700	8700	8700	8700	8700	8700	8700	8700	8700	8700	8700	8700	8700
9	39831100	լվացող նյութեր /ժավել/	6400	6400	6400	6400	6400	6400	6400	6400	6400	6400	6400	6400	6400
10	39831283	հատակի լվացման լաթ	15400	15400	15400	15400	15400	15400	15400	15400	15400	15400	15400	15400	15400
11	39522330	մաքրող կտորներ	8500	8500	8500	8500	8500	8500	8500	8500	8500	8500	8500	8500	8500
12	39224331	դույլ պլաստմասե	1320	1320	1320	1320	1320	1320	1320	1320	1320	1320	1320	1320	1320
13	19641000	պոլիէթիլենային պարկ, աղբի համար	24050	24050	24050	24050	24050	24050	24050	24050	24050	24050	24050	24050	24050
14	33761000	զուգարանի թուղթ, ռուլոնով	27000	27000	27000	27000	27000	27000	27000	27000	27000	27000	27000	27000	27000
15	18421160	երկար ձեռնոցներ	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000
16	44511110	բահեր	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000
17	44511120	զոգաթիակներ	4750	4750	4750	4750	4750	4750	4750	4750	4750	4750	4750	4750	4750
18	44411110	ջրի ծորակ, փական	22800	22800	22800	22800	22800	22800	22800	22800	22800	22800	22800	22800	22800
19	44411750	սանհանգույցի բաքեր	13200	13200	13200	13200	13200	13200	13200	13200	13200	13200	13200	13200	13200

20	31684100	վարդակ երկբևեռանի	6000	6000	6000	6000	6000	6000	6000	6000	6000	6000	6000	6000	6000
21	31651100	մեկուսիչ ժապավեն, օղակաձև	4800	4800	4800	4800	4800	4800	4800	4800	4800	4800	4800	4800	4800
22	31685000	էլեկտրական երկարացման լար	51000	51000	51000	51000	51000	51000	51000	51000	51000	51000	51000	51000	51000
23	31531210	էլեկտրական լամպ, 60W, 80W, 100W	10800	10800	10800	10800	10800	10800	10800	10800	10800	10800	10800	10800	10800
24	18141100	Աշխատանքային ձեռնոցներ	9000	9000	9000	9000	9000	9000	9000	9000	9000	9000	9000	9000	9000
25	31531600	ցերեկային լամպ 120սմ	24000	24000	24000	24000	24000	24000	24000	24000	24000	24000	24000	24000	24000
26	39224341	աղբարկղ, պլաստմասե	2100	2100	2100	2100	2100	2100	2100	2100	2100	2100	2100	2100	2100

ԳՆՈՐԴ

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքապետարան
ՀՀ Արագածոտնի մարզ
Ք.Աշտարակ,Ն.Աշտարակեցու հրապարակ 7
ՀՎՀՀ՝ 05005705
ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900442101037
Համայնքի ղեկավար՝

----------Թ.Շահվերդյան

ՎԱՃԱՌՈՂ

Գևորգ Եդիգարյան Ա/Ձ
Ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու հր. 17/1
ՀՎՀՀ 54628301
Ինեկոբանկ ՓԲԸ Աշտարակի մ/ճ
ՀՀ 2050032088111001

---------- Գ. Եդիգարյան

Հավելված N 3
«01» վեցրկարի 2018 թ. կնքված
ՀՀԱՄԱՇՏ-ՄԱ-ՏՆՏ-18/1/1 *ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N __ եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«03» դեկտեմբերի 2018 թ. կնքված
***ՀՀԱՄԱՇՏ-ՄԱ-ՏՆՏ-18/1/1** ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն